ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՀՈՒԼԻՍԻ 2024թվականի N 1129-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 24 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ1093-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 24 հուլիսի 2024 թվականի «Կարինե Սիմոնյանին պաշտոնի նշանակելու մասին» թիվ 1093-Ա որոշման մեջ կատարել լրացումներ. որոշման «Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, 15-րդ հոդվածի առաջին կետով» արտահայտությունը կարալ նոր՝ «Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, 15-րդ հոդվածի առաջին և երկրորդ կետերով » արտահայտությամբ , որոշման 1-ին կետի «Կարինե Սիմոնյանին 2024 թվականի հուլիսի 24-ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետի (պաշտոնի ծածկագիր՝ 2.1-6) պաշտոնում» արտահայտությունը կարդալ նոր՝ «Կարինե Սիմոնյանին 2024 թվականի հուլիսի 24-ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետի (պաշտոնի ծածկագիր՝ 2.1-6) պաշտոնում՝ 6 ամիս փորձաշրջանով » արտահայտությամբ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հուլիսի 26
ք. Ալավերդի